

ԾԱՂԿԱՔԱՂ

Ս. ԷՋՄԻԱԾՆԻՆ ԵՎ ՀԱՅՐԱՊԵՏԻՆ ՆՎԻՐՎԱԾ ՇԱՐԱԿԱՆՆԵՐԻՑ

Էջ Միածին ի Հօրէ և լոյս փառաց ոնդ նմա,
Զայնք հնչեցին սանդարամետք անդնդոց:
Տեսեալ զլոյս մեծ հայրապետին Գրիգորի,
Պատմէր ցնծութեամբ հաւատացեալ արքային:
Եկայք շինեսցուք սուրբ զիտորանն լուսոյ,
Քանզի ի սմա ծագեաց մեզ լոյս ի Հայաստան աշխարհի:

*
* *

Աղբիւր կենաց և փրկութեան մերոյ Հոգի Հօր և Որդւոյ,
Ի յարմատոյն Յեսսեայ բղխման գաւազանի հասեալ ժամու,
Շնորհազարդ պայծառացո զգաւազան իշխանութեան մերոյ Հայրապետին,
Զի օրհնեսցուք զքեզ Տէր այժմ և յաւիտեան:

*
* *

Ամոլորք հաւատոյ և պարծանք սուրբ եկեղեցւոյ,
Եւ հովիւ քաջընթաց երկնաւոր հօտապետին,
Յառաքելական աթոռ նստար երանելի սուրբ Հայրապետ:
Մարգարիտ լուսափայլ և լուսաւորիչ տիեզերաց,
Սիւն լուսոյ սրբութեան կանգնեալ ի մէջ Հայաստանեայց,
Յառաքելական աթոռ նստար երանելի սուրբ Հայրապետ:

*
* *

Այսօր ուրախացեալ ցնծան երկնից բազմութիւնքն,
Ի նաւակատիս սուրբ եկեղեցւոյ,
Քանզի շնորհեցաւ մեզ քահանայապետ յաւիտենից,

Ի լուսաւորել զկաթուղիկէ սուրբ զեկեղեցի.
Փառք գալստեան քո Տէր:
Այսօր քահանայապետ ճշմարիտ աստուածային օրինօքն
պատուեալ,
Կանգնէ զքառանկիւն սեղան խաչին.
Արժանապէս պատարագեալ բաշխէ զմարմին և զարիւնն Տեառն:
Մաքրապէս մերձեցարուք փրկեալք նոր ժողովուրդք
Եւ հայցեցէք ի Քրիստոսէ,
Զի շնորհեսցէ զսա մեզ ընդ երկայն աւուրս:

ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔ

Ամեն հայի սրտից բխած,
Լսիր այս ձայն, ո՜վ Աստուած.
Երկար կեանք տուր Հայրապետին,
Երկար օրեր Հայոց Հօր.
Տէ՛ր, անսասան պահիր Դու միշտ
Քո իսկ հիմնած Մայր Աթոռ:



Լենինական